Հեղինակ՝ Արմինե Ավագյան

ԴՊՐՈՑՈՒՄ ԲՈՒԼԻՆԳԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐ

Տարիքային խումբ - կրտսեր դպրոցականներ և դեռահասներ:

Նպատակը - Պարզել դասարանում բռնության առկայության մասին (ինչպես աշակերտների, այնպես էլ ուսուցիչների կողմից):

1. Հոգեբանական մթնոլորտը դասարանում (մեթոդիկա ըստ Ֆեդորենկոյի)

Դասարանում հոգեբանական մթնոլորտն ուսումնասիրելու նպատակով խնդրում ենք պատասխանել հետևյալ հարցերին ՝ շրջանակի մեջ վերցնելով այն պատասխանը, որի հետ համակարծիք ես:

1. **Ի՞նչ տրամադրությամբ ես հաճախում դպրոց:**
   1) միշտ լավ տրամադրությամբ
   2) ավելի հաճախ լավ, քան վատ
   3) անտարբեր
   4) ավելի հաճախ վատ, քան լավ
   5) միշտ վատ տրամադրությամբ

2. **Քեզ դո՞ւր են գալիս դասընկերներդ:**
   1) այո, դուր են գալիս
   2) շատերն ինձ դուր են գալիս
   3) անտարբեր եմ դասընկերներիս նմատմամբ
   4) քչերն են ինձ դուր գալիս
   5) ոչ ոք ինձ դուր չի գալիս

3. **Երբևէ ցանկություն ունեցե՞լ ես տեղափոխվել այլ դասարան:**
   1) երբեք չի եղել նման միտք
   2) երբեմն մտածում եմ
   3) ինձ չի հետաքրքրում, թե որտեղ կսովորեմ
   4) հաճախ է պատահում
   5) ես անընդհատ մտածում եմ այդ մասին

4. **Արդյո՞ք դասերը հետաքրքիր են անցկացվում:**
   1) շատ հետաքրքիր են անցկացվում
   2) ավելի շատ՝ հետաքրքիր, քան՝ անհետաքրքիր
   3) անտարբեր եմ
   4) ավելի շատ՝ անհետաքրքիր, քան՝ հետաքրքիր
   5) ընդհանրապես հետաքրքիր չեն անցկացվում

5. **Ինչպիսի՞ն է ուսուցչիդ վերաբերմունքը քո նկատմամբ:**
   1) շատ լավ
   2) լավ
   3) անտարբեր
   4) վատ
   5) շատ վատ

6. **Ինչպիսի՞ն է այլ ուսուցիչների վերաբերմունքը քո հանդեպ:**
   1) քաղաքավարի են, հարգալից
   2) հաճախ՝ քաղաքավարի, երբեմն էլ՝ կոպիտ
   3) ինձ չի հետաքրքրում նրանց վերաբերմունքը
   4) կոպիտ են, երբեմն՝ քաղաքավարի
   5) շատ կոպիտ

Արդյունքների մշակում: Յուրաքանչյուր հարցի համար հաշվել այնքան միավոր, որքան տվյալ հարցի պատասխանների թիվն է:

Մինչև 12 միավոր – Հոգեբանական մթնոլորտը կայուն է, աշակերտը հաճույքով է հաճախում դպրոց:

13-18 միավոր - Աշակերտն անտարբեր է, թե ինչպիսին է մթնոլորտը դասարանում, քանի որ ունի ընկերական շփման այլ ու ավելի հաճելի խումբ:

19-30 միավոր - Հոգեբանական մթնոլորտը գնահատվում է բացասական, առկա է բուլինգի երևույթ:

2. Անավարտ նախադասությունների մեթոդիկա (ըստ Ս. Լևիի)

1. Ես չեմ սիրում, երբ իմ դասընկերները …
2. Հրաշալի կլիներ, եթե դասընկերներս…
3. Ես տխրում եմ, երբ դասարանում …
4. Ես ինձ վատ եմ զգում, երբ դասընկերներս…
5. Ուզում եմ, որ իմ դասարանը …
6. Ես ուրախ և երջանիկ եմ լինում, երբ դպրոցում…
7. Ինձ դուր է գալիս, երբ դասընկերներս…
8. Խորհուրդ կտամ դասընկերներիս…
9. Ես տխրում եմ, երբ ուսուցչուհիս…
10. Ուզում եմ, որ ուսուցչուհիս…
11. Ինձ դուր է գալիս, երբ ուսուցչուհիս …
12. Ես ինձ վատ եմ զգում, երբ ուսուցչուհիս…
13. Խորհուրդ կտամ ուսուցչուհուս …